


Թիւններ առնելու եւ ճշդիւ գրելու համար պէտք է մէկը , որ անձնուիրաբար շրջագայի եւ ամեն պէտքերն թէ բարոյական եւ թէ նիւթական , աչքով ատենէ եւ ձեռքով շոշափէ . այժմ այս շափը միայն կարելի է ըսել , քանի որ Ատանայի նման վաճառականութեամբ բաւականաչափ բարգաւաճեալ քաղաք մի այսքան կը տառապակրի , քանի՞ն առաւել ուրիշ ստորին տեղեր :



Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ք

Անցեալ ամսոյ մէջ քաղաքիս Ասորոց Գեր . Ապտ-իւլ-նուր Եպիս. պիսկոպոսը վախճանեցաւ 'ի հասակի գրեթէ իննսուն ամաց : Յիշեալը 30 տարիէ 'ի վեր է որ այստեղ Եպիսկոպոսական պաշտօնը կը վարէր . Հինդ-կաստանի իրենց աղբայինները այցելութեամբ միթարած է եւ անոնց նուիրատուութեամբ վանքին մէջ շատ նորոգութիւններ ըրեր ու բաւական կալուածներ աւելցուցած է : Ս . Ա . Թոռոյս կողմէն հարկ եղած անձինքը զրկուեցան 'նորա յուզարկաւորութեան համար , որ կատարուեցաւ թէ ըստ մեր եւ թէ ըստ իրենց ծիսից :

— Ամսոյս սկիզբները Եւրոպացի ճանապարհորդ մի Քեթղէհէմի ճանապարհին վերայ սեւամորթի մը դիակ տեսնելով՝ տեղական Կառավարութեան լուր կը տայ : Եղած քննութիւններէն յայտնուեցաւ , որ սպանեալը դաշտի հարուածով մեռած է . որովհետեւ ձախ ուսին վերայ վէրք մի ունի եղեր : Գիակկին գտնուած տեղը արեան հետք տեսնուած չէ , մարմնոյն մէկ կողմը բացուած է եղեր , թերեւս վայրի կենդանիներ պատուեր են . ըսպանուելէ յետոյ , երեսի մորթը հա-

նուած է : Այս ամեն պարագայներէն հետեւցուցած են որ մէկ շաբաթ առաջ սպանուած է : Այս դիակը Չապթիէի դիակ մի ըլլալը ստուգուեցաւ . որովհետեւ սորա անյայտանալէն մի քանի սր յետոյ Չապթիէներու յիսնապետներէն մէկը՝ սրոց առանին ըսպասաւորութիւն կ'ընէ եղեր սպաննեալը՝ ոստիկանութեան տեսչին յայտնած է , որ Չապթիէն իւր տունէն բաւական կահ կարասիք գողնալով փախած է . այս պատճառաւ յիշեալ յիսնապետը իրբե կատկածաւոր քրննութեան ենթարկուեցաւ :

— Ամսոյս 1 ին Յոպպէ ելաւ Քաղաքիս նորընտիր Կառավարիչ Վ.սեմ. Բաուֆ փաշան . երկրորդ սրբ տեղս ժամանեց մեծ հանդիսիւ եւ ընկերակցութեամբ պաշտօնաւոր անձանց , վանքերու կողմէն զրկուած Եպիսկոպոսոց եւ Թարգմանոց , նոյնպէս Հիւպատոսաց Թարգմաններու եւ պահակներու : 4 ին Հրովարտակր կարգացուելով՝ պաշտօնական այցելութիւններն եղան :

— 5 ին նախորդ Կառավարիչը մեկնեցաւ :

— 12 ին Յորդանանու ճանապարհին վերայ քաղաքացի ջորեպան մի կողոպտուեցաւ Պեպէ-Ֆէնիէն : Յիշեալ ջորեպանը չորս գրասոք ցորեն բեռցած քաղաք կը բերէ : Արասները կը յարձակին , կենդանիները կ'առնեն հանդերձ բեռներով , նոյնպէս ջորեպանը կը կողոպտեն եւ վերայի հանդերձները կ'առնեն , երբ կը խնդրէ գոնէ ըսթերը թողուլ , դէմքին հարուած մի տալով՝ կը մեկնին :

— Յորդանանու կողմի Արասներու կռիւր դրած էինք Մարտի ամսաթերթով . այժմ զինադադար ըրած են հնձոց պատճառաւ : Թերեւս հունձէն յետոյ վերստին սկսին :